

երկու տրիկինները կրօնական սքեմ հագան . հոն մեռան եւ թաղուեցան(1) . Ասոնց մեռնելէն ետքը Սոհիէրն ալ Եւրոպա անցաւ :

Կահիրէի Հայերը, որոնց մէջ պետական նշանաւոր անձնաւորութիւններ ալ կային, առն մը կահաւորելով Լեւոնի տրամադրութեան տակ դրին, որպէս զի Հայոց թագաւորն ու թագուհին հանգիստ կերպով կարենան բնակիլ . սուլտանն ալ անոնց ապրուստին համար օրական վաթսուն արծաթեայ դրամ յատկացուց :

Լեւոն թէեւ բերդարգել (2) Կահիրէի մէջ, սակայն ճար մը կը խորհէր

(1) Երուսաղեմի միաբաններէն Հոգ. Սերովբէ վ. Սամուելեան ինձ կը գրէ, որ 1896-ին ս. Գլխադրի մասրան մեջ նորոգութիւններ կատարուած միջոցին երկու գերեզմաններ գտնուեցան, երկուքն ալ առանց յիշատակարանի, որոնք կը կարծուին Մարիամի եւ Ֆիմիի գերեզմաններն ըլլալ : — Մասիրոս Ղրիմեցի որո՞ւ կերպով կը գրէ, թէ Եգիպտոսի սուլտանը Լեւոնն ու հետեւորդները գերելէն ետքը՝ Մարիամի (բնագիրը՝ « Մօրու ») մասին մասնաւոր գուք ունեցաւ եւ արժանեց երթալ Երուսաղեմ .

« Առ որ խրղճեալ բրնձաւորին ,
Թողու ազատ զայն թագուհին ,
Ասէ զընալ ուր ե կամին :
Իսկ նա դիմէ ի Պաղեստին ,
Հասանէ զբաւ կենաց նորին
Յերուսաղեմ սուրբ բաղաբին .
Թաղի ընդ սեամբ սուրբ սանձարին ,
Հայոց ազգի սուրբ աթոռին » :

(Անդ , տող 68-75) :

ձիւս ալ երկու գերեզմանները գտնուած են սանարին « չորս սիւներէն միայն շաւ մօս » : Իսկ Իիւլյորիէ կըսէ , որ Կ. Պոլսի Երուսաղեմասնէն հաղորդուած է իրեն հետեւեալ կտակածիլի արձանագրութիւնը . « Աստ հանգեալ կան բազումնին եւ դուստր նորա Փիննա » , եւ այս օրինակին կցուած ծանօթութիւնով մըն ալ յայտնէր են իրեն , որ « բուականն եղծուած է » : (*Rec. Croisades*, անդ , եր. 738) : Աւելի հին ականասես մը Լանգլուային ըսած է , որ այս գերեզմանները կը գտնուին գաւթին մէջ : (*Revue archéologique*, 1859, եր. 162, ծանօթ. 1) : — Հ. Ալիբանի հետ կընդունիմ , որ Մարիամի մահը պատահած է 1377-ին : (*Հմմտ. Սխառան*, եր. 560) :

(2) Ոմանք կը կարծեն թէ Լեւոն Կահիրէի մէջ բանտարկուած ըլլալ : Սխալ է այս կարծիքը : Լեւոն ազատ բերդարգել մըն եր , այսինքն՝ Կահիրէի